

կամ թելդ եւ կամ ուրիշ մէկ կողմդ: Փողոցներ կան, որ Կ. Պօլսոյ առումէն ի վեր նորոգուած չեն եւ նորոգուելիք ալ չունին:

Ահա Քարակէօմրիւկի եկեղեցին, որուն անունն է Ոսկեբերան եւ ուր կայ հրաշագործ Աստուածածին: Ուխտատեղի է, ջերմեռանդ եւ բարեպաշտ ուխտաւորները պզտիկ Չարխափան կ'անուանեն այս աղօթից տունը: Զաւակ չունեցող այրերն ու կիները հոս ուխտի կու գան, շատ զաւակ ունեցողներն ալ հոս ուխտ կ'ընեն: Պարապ պտըտողները, հիւանդութենէ ելնողները, իրենց սպասաւորներուն իրաւունքը ուտողները, իբրեւ աւանդ առնուած աղամանդները ուրիշի ծախողները, որբեւայրիներուն ստակը կլանողներն ընդհանրապէս հոս ուխտի կու գան:

Այս տեղի քահանաներն ալ քիչ - շատ ուսած են հրաշագործութիւն եւ երբեմն - երբեմն պզտիկ հրաշքներ ալ կգործեն: Ջերմեռանդի մը կողմէ Աստուածածնայ պատկերին նուէր տրուած զուտ ոսկիէ գօտի մը երկու օրուան մէջ ոսկեգօծ պղնձի փոխուեցաւ. ուրիշի մը նուիրած *խասս թէլփէշէն* ալ *սիմի* այլափոխուեցաւ:

Երբեմն ինքնիրմէ ասանկ այլակերպութիւններ տեղի կ'ունենան այս եկեղեցւոյն մէջ, այլակերպութիւններ՝ որ ուրիշ եկեղեցիներու մէջ ալ պակաս չեն:

Թաղիս քարոզիչն ալ կտրուկ մարդմ'է, շատախօսութիւն չսիրեր. շատ անգամ պաշտօնական գրութիւններն եւ երբեմն ալ աւետարանը կհամառօտէ եւ այնպէս կկարդայ, ունկնդիրներուն ձանձրոյթ չտալու համար:

Թաղական խորհուրդը մօտերս պիտի որոշէ, որ օրինաւոր տեսրակ ունենայ եկեղեցական անօթներու, որպէսզի անոնք ալ հրաշքով չփոխուին կամ երկինք չհամբառնան: Մեծ զգուշութիւն եւ խնամք պէտք է այն թաղերը, ուր հրաշքներ կգործուին:

Սոյն միացեալ թաղն, որ կբաղկանայ Քարակէօմրիւկ, Սալմաթօմրուք, Սուլթան Համամ, Պզտիկ եւ Մեծ Մալթա թաղերէ՝ ունի հինգհարիւր յիսունը չորս տուն հայ: Ամենէն բազմամարդն է Սալմաթօմրուք, որ ունի չորս հարիւր քսան եւ ութը տուն, մէկ եկեղեցի, մէկ նախակրթարան, մէկ ուսումնարան եւ աղջիկներու վարժարան մը: Յիշեալ դպրոցներուն մէջ կան հարիւր երեսուն եւ ութ աշակերտ եւ ութսունը չորս աշակերտ*ուհի* կամ աշակերտ*անոյշ* կամ աշակերտ*աղուխտ*: Վեց տարեկանէն վեր աշակերտ կամ աշակերտուհի չընդունուիր, վասնզի այս տարիքին մէջ